ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-23-10/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 21-ը մարտի 2023թ. ժամը 09:45

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-23-10/4» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումն իրականացվել է 10.03.2023թ.-ին՝ Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Հանձնաժողովը մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո աշխատանքները շարունակեց 21.03.2023թ.-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝

ՀՀ ՊՆ ԿՇ և ՉԲՎ ՉԲՖԿ ծառության պետ Ա. Պապյանը,

Մասնակցում էին՝

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ ԿԾԲ պետ Ա. Աֆյանը,

ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Թ. Ստեփանյանը,

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Մ. Հոխսեյանը

*Ի գիտություն՝ գնահատող հանձնաժողովի կազմում տեղի է ունեցել փոփոխություն՝ 07.03.2023թ. թիվ 85 հրամանի համաձայն հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝ ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ պետի տեղակալ Ա. Գալստյանին փոխարինում է հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝ ՀՀ ՊՆ ԿՇ և ՉԲՎ ՉԲՖԿ ծառության պետ Ա. Պապյանը:*

«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-23-10/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

---

(Մ. Հոխսեյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-23-10/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը ըստ չափաբաժինների և տեղեկություններ բանակցությունների վարման մասին.

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-23-10/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում ըստ չափաբաժինների ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

6.Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

---

(Մ. Հոխսեյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-23-10/4» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանումները |
|---|---|
| 1 | «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ |
| 2 | «Սինխրոն» ՍՊԸ |
| 3 | «Բեսթ Մոթորս» ՍՊԸ |
| 4 | «Անուշ Պետրոսյան» ԱՁ |
| 5 | Ա/Ձ «Մեսրոպ Աղազարյան Վիգենի» |
| 6 | «Ա-2» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-23-10/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

---

(Մ. Հոխսեյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, սակայն արձանագրել են անհամապատասխանություններ, մասնավորապես.

-«Անուշ Պետրոսյան» ԱՁ կողմից ներկայացված հայտի Հավելված N 1-ի առաջին կետում նշված է մասնակցության իրավունքի պահանջներին բավարարման վերաբերյալ մասնակցի հավաստումը, այնինչ վերոնշյալ ընթացակարգի հրավերի Հավելված N 1-ի առաջին կետում նշվում է մասնակցի և իրեն փոխկապակցված անձանց մասնակցության իրավունքի պահանջներին բավարարման վերաբերյալ հավաստումը: Ուստի անհրաժեշտ է Հավելված N 1-ը ներկայացնել հրավերի պահանջներին համապատասխան:

- «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում բացակայում է /ներկայացված չէ/ լիազորագիրը՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Կարեն Խաչատրյանի կողմից Հավելված N 1-ը՝ /ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն/ և Հավելված N 2-ը՝ /գնային առաջարկ/ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու իրավասության վերաբերյալ: ՈՒստի անհրաժեշտ է ներկայացնել տնօրենի կողմից հաստատված լիազորագրի բնօրինակը:

2.3 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 17.03.2023թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց «Անուշ Պետրոսյան» ԱՁ-ին և «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում /20.03.2023թ./ շտկել վերը արձանագրված անհամապատասխանությունները:

2.4 21.03.2023թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում ««Անուշ Պետրոսյան» ԱՁ-ի և «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից շտկվել են վերը արձանագրված նհամապատասխանությունները և վերջիններիս

կողմից ներկայացված հայտերը գնահատվեցին «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-23-10/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը ըստ չափաբաժինների և տեղեկություններ բանակցությունների վարման մասին.

(Մ. Հոխեյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Չափաբաժնի համարը և չափաբաժնի անվանումը | Ծառայության առավելագույն գումարը /ՀՀ դրամ/ | Ծառայությունների միավոր գների հանրագումար /Նախահաշվային արժեքը /ՀՀ դրամ// | «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ առաջարկած գինը առանց ԱԱՀ և ԱԱՀ-ով ՀՀ դրամ /միավոր գների հանրագումար /ՀՀ դրամ// | «Սինխրոն» ՍՊԸ առաջարկած գինը առանց ԱԱՀ և ԱԱՀ-ով ՀՀ դրամ /միավոր գների հանրագումար /ՀՀ դրամ// | «Բեսթ Մոթորս» ՍՊԸ առաջարկած գինը առանց ԱԱՀ /միավոր գների հանրագումար /ՀՀ դրամ// | «Անուշ Պետրոսյան» ԱՁ առաջարկած գինը առանց ԱԱՀ /միավոր գների հանրագումար /ՀՀ դրամ// | Ա/Ձ «Մեսրոպ Աղազարյան Վիգենի» առաջարկած գինը առանց ԱԱՀ /միավոր գների հանրագումար /ՀՀ դրամ// | «Ա-2» ՍՊԸ առաջարկած գինը առանց ԱԱՀ և ԱԱՀ-ով ՀՀ դրամ /միավոր գների հանրագումար /ՀՀ դրամ// | Ընտրված մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Էլեկտրական շարժիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ | 9 000 000 | 2 633 240 | 2 375 000/ 2 850 000 | 1 921 700/ 2 306 040 | — | — | — | — | «Սինխրոն» ՍՊԸ |
| 2. Պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ | 4 500 000 | 457 560 | 450 000/ 540 000 | 346 500/ 415 800 | — | 350 900 | — | — | «Սինխրոն» ՍՊԸ |
| 3. Պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ (Խորքային պոմպեր) | 4 500 000 | 767 100 | Գնային առաջարկի բացակայություն | | | | | | |
| 4. Փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ | 9 000 000 | 3 252 100 | — | — | 3 235 700 | 2 540 900 | — | — | «Անուշ Պետրոսյան» ԱՁ |
| 5. Հաշվիչների և հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | 900 000 | 134 812 | — | — | — | — | — | 56 155/ 67 386 | «Ա-2» ՍՊԸ |
| 6. Գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայություններ | 7 000 000 | 20 250 180 | Գնային առաջարկի բացակայություն | | | | | | |
| 7. Փոխակերպիչների վերանորոգման-պահպանման ծառայություններ (Օդորակիչներ) | 7 300 000 | 841 900 | 540 000/ 648 000 | — | — | 550 900 | 550 000 | — | «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: Մասնակիցներից «Անուշ Պետրոսյան» ԱՁ-ն, Ա/Ձ «Մեսրոպ Աղազարյան Վիգենի»-ն և «Բեսթ Մոթորս» ՍՊԸ-ն՝ աշխատում են առանց ԱԱՀ:

3.3 «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-23-10/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում բանակցություններ չեն վարվել:

3.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-23-10/4» ծածկագրով ընթացակարգը 3-րդ /Պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ (Խորքային պոմպեր)/ և 6-րդ /Գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայություններ/ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները՝ (ոչ մի հայտ չի ներկայացվել):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-23-10/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում ըստ չափաբաժինների ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Մ. Հոխեյան)

4.1 21.03.2023թ. հիմք ընդունելով «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-23-10/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների էլեկտրոնային գնահատման արդյունքերը, հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային (ընդհանուր) առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-23-10/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների ընտրված մասնակից ճանաչվեց՝ «Սինխրոն» ՍՊԸ-ն, 4-րդ չափաբաժնում՝ «Անուշ Պետրոսյան» ԱՁ-ն, 5-րդ չափաբաժնում՝ «Ա-2» ՍՊԸ-ն և 7-րդ չափաբաժնում՝ «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ն: Բավարար գնահատված մյուս մասնակիցները ճանաչվեց այդպիսին չճանաչված մասնակիցներ՝ ըստ համապատասխան չափաբաժինների համար ներկայացրած գնային առաջարկների:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-23-10/4» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-23-10/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.4 Սույն ընթացակարգում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն կիրառվում է տասնօրյա անգործության ժամկետ:

4.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-23-10/4» ծածկագրով ընթացակարգի ըստ չափաբաժինների ընտրված մասնակցներին անգործության ժամկետը լրանալուց հետո պայմանագիր կնքելու առաջարկներ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Մ. Հոխեյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.

(Մ. Հոխեյան)

6.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-23-10/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:*

Գնահատող (ԳԱՊ)՝ Ա. Պապյան

Գնահատող Ա. Աֆյան

Գնահատող Թ. Ստեփանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Հոխեյան